

ԶՔՆԱՂԱԳԵՂՆ ՄԱՆԴՈՒ

«Հրամայեաց (Արտաշէս) զապարանսն Ար-
գամայ այրել և զհարճ նորին, որ կարի չքնաղ
էր գեղով և մնացեալ գնացիւք ոտիցն, զոր
կոչէին Մանդր, ածել ի հարճութիւն Ար-
տաշիսի»:

(Խորեն. Գ. Բ. գլ. ԾԱ)

Նախ քան Խորենացու յանձին չքնաղ Մանդուի՝ յօղուածիս
ճակատում դրուած վարեանտի հարազատ բացատրութեան՝ ցարդ
իսկապէս անբացատրելի մնացած՝ «Չքնաղ էր գեղով և մնացեալ
գնացիւք ոտիցն»-ի, ի դէպ՝ ի դիւրութիւն իմաստասէր ընթեր-
ցողների՝ անհրաժեշտ վարկայ նախապէս համառօտակի՝ սակայն
հանգամանօրէն ծանօթացնելու զորդեան հանգոյց դարձած խնդրի
հետ առնչականօրէն կապուած պատմութեան ներկայիս համեմա-
տութեամբ, և ըստ այնմ անցնելու ցարդ տեականութեան մէջ
մնացած ժողովրդական ասացուածքների, սովորութիւնների և հո-
գեբանութեան, և յետոյ անցնել բուն խնդրի լուսարանութեան:

Որքան պատմութիւնից մեզ յայտնի է՝ Մուրացան (Մարաց)
գաղթականութեան սկիզբը Հայաստան՝ համարուած է Տիգրան Մեծի
օրերից, որոնք իրենց սկզբնական բնակութիւնը հաստատելով
Մասսի հիւսիս-արեւելեան լանջերում և հետզհետէ բազմանալով
ընդարձակ՝ տարածութիւն բռնեցին Հայաստանի կենտրոնում—
նորա սրտի մէջ՝ գլխաւորապէս Շարուրայ գաշտում, գեղեցկա-
դիր դարեանդ Նախճաւանը դարձնելով իրենց մայրաքաղաք:
(«Նախճաւան» անունն բացատրութիւնը տեսնել մեր «Կուրմանժ»
հեղինակութեան մէջ):

Քիչ յետոյ՝ Մուրացան գաղթականութեանը տեսնում ենք
մինչ իսկ թագաւորութեան երկրորդութեան բարձրացած՝ Արտա-
շէս Բ-ի օրով՝ ի տրիտուր սպանման երուանդ թագաւորի, որպէս
և երուանդակերտի գրաւման և իւր Արտաշէսի թագաւորութեան՝
Արգաւանի օգնութեան շնորհիւ, որին արտօնեց կրելու յալնթով
պսակ, ոսկեայ օղեր ականջներին, կարմիր կօշիկ մի ոտքին, իսկ
սեղանի վերայ՝ ոսկեղէն գաւաթներով խմելու և ոսկեայ զրգալ և
պատառաքաղ գործածելու՝ որպէս իւր թագաւորութեան երկրորդի:

Արտաշիսի գահաժառանգ՝ Արտաւազդ որդին՝ հուսկ յետոյ,

չկարողանալով տանել Մուրացան և նրա տիրադրուժ Արգաւանի այդ աստիճան բարձրութիւնը, և որ զլխաւորն է՝ նախատեսելով գալիք չարիքը, խլում է Արգաւանից երկրորդութեան պատիւը, իրեն սեպհականացնելով՝ որպէս արքայական զահաժառանգի։ Եւ միաժամանակ յաջողուում է ձեռք բերելու՝ հայ նախարարութեան և հօր համաձայնութիւնը՝ բնաջինջ անելու Մուրացան ցեղը իւր նախարարապետ Արգաւանով, որի ազդեցիկ և մտերմական ջերմ յարաբերութիւնը արքայական պալատի հետ՝ տեղի էր տուել ընդհանրութեան բուռն զայրոյթի, մանաւանդ՝ յանձին Ալանուհի Սաթենիկի տարածուած սիրահարական լեզենդաների՝ Սաթենիկի և Արգաւանի շուրջը, որպիսին դոյն իսկ ենթարկուել էր հայ գուսանների նախատալիր վիպական երգերին։—

— «Տենչա՛ Սաթենիկ տիկին, տենչա՛ զարտախուր խաւարտ և զտից խաւարծի ի բարձիցն Արգաւանայ»։ Վերջնոյս վերաբերեալ մեր տուած նորագոյն բացատրութիւնը՝ 1909 թուի № № 14 — 15 «Հովիւ» շաբաթաթերթում՝ ոչ փոքր ուշադրութեան արժանացաւ իւր ժամանակին։

Իսկ երբ Արտաշէսի՝ Արգամի մօտ ճաշի եղած ժամանակ, դաւադրութեան նշաններ երևացին, այն օրուանից արդէն խզուեցին երկուստեք եղած սերտ յարաբերութիւնները։— «Յետ այսր՝ երթալով Արտաշիսի ի ճաշ Արգամայ, կասկած իմն անկեալ իբր թէ՛ դաւել զարքայն խորհեցան, յարուցանեն որդիքն արքայի, ապշոպ՝ և անդէն իսկ ի հացին քարշեն զալիսն Արգամայ»։ Որից յետոյ՝ և վերջապէս որոշուում է Արգաւանի և իւր ցեղի բնաջինջման հարցը, և պատերազմի գործունէութեան ձեռնբերեցութիւնը յանձնուում է Մաժանին։ (Արտաշէսի Բ. որդին)։

Արտաշէսը յանձնարարում է Մաժանին՝ ինչպէս էլ որ լինի, խնայել Արգաւանի գեղեցկուհի Մանդուին և իրեն հարձուութեան բերել։ Նա ահաւանիկ։—

«Արձակեաց զորդի իւր զՄաժան մեծաւ գնդաւ, և զբազումս յազդէն Մուրացան սպանանել հրամայեաց և զապարանսն Արգամայ այրել . . . զհարձ նորին ածել ի հարձութիւն իւրն»։

Եւ նոյնութեամբ այդպէս էլ կատարուում է Արտաշէսի հրամանը և որդւոց կամքը, վերջ ի վերջոյ եղեռնական մահով սպանուում է Արգաւանը և ջնջուում Հայաստանի սրտից Մուրացան օտարամուտ նախարարութիւնը։

Այս պերճախօս՝ փոքր յիշատակութիւնից՝ ինքն ըստ ինքեան պարզուում է, որ Մանդուի ազատուելը, պատահականութեան արդիւնք չէր, որպիսին մեր քննադատ գիտնականները փոխադարձ թիւր հետևականութեամբ՝ ոչ ի դէպ վերագրում են չքնադ Մանդուի իբր ծանրաքայլ, կաղ կամ յղի լինելուն, որպիսին մի-

անգամայն հակասում է պատմութեան ոգուն և գործի իրականութեան և բնագրի բառական նկարագրին:

Եւ որն երբէք ի նկատի չէ ունեցել և հայր Պատմաբանը, այլ միայն կամեցել է պարզ ի պարզոյ տուած լինել՝ յանձին չքնադ Մանդուի նախատեսուած խնդրի ազատութեան իսկական պատճառները, որպիսին տեղի է ունեցել ի յարգանս նորա անզուգական գեղեցկութեան և գեղարուեստական ինչ ինչ բարձր յատկութիւնների, որով խորապէս հրապուրել էր Արտաշէսի սիրտն ու հոգին:

Առ այս՝ փոքր ինչ էլ առաջ գնանք՝ մերայնոց հնի և ներկայի համեմատական անշեղ մասշտաբով զուտ նահապետական սովորութիւններով անաղարտ մնացած բուն բնիկ հայ ժողովրդի անկապտելի դաւանանքի, համոզմունքի և կենցաղի շրջագծով, ուր կտեսնենք հնի դարեւոր տեականութիւնը. ներկայումս միանգամայն անփոփոխ ըստ էութեան:

Հայը՝ դէմքի, հասակի գեղեցկութեան հաւասար՝ և դեռ շատ աւելին՝ կշիռ է ընծայել և ընծայում մարդկային խոհականութեան, բնաւորութեան և խելքին, որպէս և նրա քայլուածքներին և շարժուածքներին, մանաւանդ յանձին գեղեցիկ սեռի:

Ապացուցութիւն բանիցս՝ անհրաժեշտ վարկայ դնելու մի քանի կենդանի խօսուն օրինակներ՝ ազգային վիպական երգերի, որպիսիք գերադասում են խելքը, միտքը, քայլուածքը, ծառայութիւնը առաւել քան գեղը և գեղեցկութիւնը:

Ահա՝ ձեզ.—

«Բիւլէ-քիւլէ քիւլքով աղջիկ, քանց քո մէրը խելքով աղջիկ, քիւլէ-քիւլէ քէլքիդ մատաղ, քիւլէ-քիւլէ խելքիդ մատաղ»:

«Յոլաց գնաց իմ եարը, արևի տակին ցոլաց գնաց իմ եարը, քիւլէր-ցոլար իմ եարը, արևի տակին քիւլէր-ցոլէր իմ եարը:

Յոլացող եար ջան, կաքաւող եար ջան, ինժնեք եար ջան,...

Ախ քո քէլքը տարաւ իմ խելքը, օրօրա-շօրօրա գնդիկ եար ջան, օրօրա-շօրօրա բոլորիկ եար ջան»:

Տոտիկն-տոտիկն՝ շան աղջկայ տոտիկն՝ (դիւրաշարժ փոքրիկ տոտիկների նուրբ գեղեցկութիւնը):

Այս ամենից՝ լուսի պէս պարզ ակներև է ուրեմն, որ հայ հոգեբանութեան, դաւանանքի և համոզմունքի մէջ գեղեցկութիւնից շատ աւելի բարձր է խելքն, գնացքը, բնոյթը, գործը, ցումունքը, և նա յայտնապէս՝ իւր երբեմնի կենսատու արև-արեգակ Աստուծո կենդանարար ճառագայթների ներքոյ՝ գովաբանում է խելքն և ցոլքը:

Եւ այսօր իսկ բնիկ հայ մայրը՝ սիրում է վարժեցնել իւր մանկանը գեղեցիկ քայլելու, պարելու արհեստի մէջ, նոյնը յաճախ

տեղի է ունենում փոխադարձաբար՝ որպէս փոքրերի, այնպէս և հասակաւորների մէջ:

Քանիցս պատահել է ինձ լսել ցաւակցական ակնարկներ այս կամ այն գեղեցիկ օրիորդի, տիկնոջ՝ վերաբերեալ, երբ նա զուրկ է եղել կանոնաւոր և վայելուչ քայլուածքից:—

«Ախ, շան աղջիկը շատ սիրուն ա, ափսոս խելք չունի»:
Դառնանք բուն խնդրի լուծման:

«Կարի չֆնաղ եր գեղով եւ մնացեալ գնացիւք ոսիցն, զոր կոչեին Մանղու»: Յօդուածիս սկզբում յիշեցինք, կարծեմ՝ ցարդ եղած բանասէր քննադատների բացատրութիւնները՝ յղիի, ծանրաքայլի, կաղի՝ իմաստով, որպիսիք միանգամայն չեն համապատասխանում պատմութեան ոգուն՝ և ոչ նրա գրուածքի բառական իմաստին: Մի բոպէ նեղութիւն չեն քաշել՝ խորասուզուելու խնդրի էութեան մէջ, որ Մանղուի աղատութեան գործը նախատեսուած է եղել, և երբէք կապ չունի պատահականութեան. նա ահաւանիկ ինքը Խորենացին:— «Արձակեաց (Արտաշէս) զորդի իւր զՄաժան մեծաւ գնդաւ և զբազումս յազգէն Մուրացան սպանանել հրամայեաց և զապարանսն Արգամայ այրիւ... զհարձ նորին (Մանղու) ածել ի հարձութիւն իւրն»:

Ով զարմանք, այս ամենից յետոյ՝ միթէ կարելի է երկու թագաւորների մէջ կռուախնձոր դարձած՝ տեսքով աննման գեղեցիկ և սիգահմմ՝ նազանի գնացքով մեծապէս օժտուած պալատական գեղանի տիկնոջ վերագրել որ և է անձնական արատ:

Բոլոր քննադատներից կյիշատակեմ միայն՝ գիտնական Էմինի վերապահութիւնը և խորհրդաւոր լռութիւնը, որը զգալով իւր՝ հայ գաւառաբարբառին, նորա սովորութիւններին՝ անտեղեակ լինելը, բարւոք է համարել ոչ մի խօսք չասել և իրեն չձգել ի զուր քմահաճ թեր և դէմ բացատրութիւնների մէջ, խելօք է վարուել իւր թարգմանութեան մէջ և հայր Ստեփանէն՝ հետեւելով Էմինին չի յայտնել և ոչ մի կարծիք:

Առաջի և գլխաւոր նախադասութիւն.— «Կարի չֆնաղ եր գեղով», որը ոչ մի բացատրութեան կարօտութիւն չունի, երկրորդ նախադասութիւն.— «Մնացեալ գնացիւք ոսիցն», որպիսին շարա-յարութիւնն է առաջինի, և առնչականօրէն կապուած առաջինի հետ, որի բայը և անուն բային գտնուում են առաջին նախադասութեան մէջ՝ ըստ որում պիտի լինէր «Կարի չֆնաղ եր (Մանղուն) եւ մնացեալ գնացիւք ոսիցն»: Եթէ այդ այդպէս չլինէր, այլ լինէր այնպէս, ինչպէս ցարդ բացատրուել է քննադատներից, այն դէպքում երկու նախադասութիւններն բաղնիսսական «եւ» շաղկապով չէին շաղկապուի, այլ անջատական «բայց» օրոհական շաղկապով կհակասէին միմեանց, որպիսին զրուած էր լինելու՝ «Կարի չֆնաղ

էր գեղով, բայց մնացեալ գնացիւք ոսիցն», ուր արդարեւ՝ կրացատուէր, քեւել տաս գեղեցիկ էր դիմով, բայց ափսոս որ կամ էր, կամ ծանրագնաց էր կամ յղի էր, կամ մի այլ ախպիսի, սակայն, Պատմահայրը բացէ ի բաց գովաբանում է չքնաղ Մանդուի աննման գեղեցկութեան հետ և նրա «մնացեալ գնացիւք ոսիցն»-ը, որն իւր այդ անզուգական գեղեցկութեան կատարելութեամբ գերելով՝ հրապուրել և յափշտակել էր Արտաշիսի սիրտն ու հոգին։ Վերջին անլուծելի համարուած երեքբառեան նախադասութեան մէջ՝ երկու բառն նոյնութեամբ կան, միայն աղաւաղուած է համբակ գրչականերից առաջին բառն այն է՝ «աննմանեալ»-ն՝ որ դարձել «մնացեալ» և տեղի է տուել այսքան անվերջ առարկութեան, կարծեսնել տալով՝ մի գուցէ՝ կանանց յղութեան վերաբերեալ ժողովրդական դարձուածքը լինի՝ «ոտը ծանր է, մնացած է», այո՛, իսկապէս գործածական են յղութեան վերաբերեալ այդ ոճը, բայց ինչ կապ ունի այստեղ Մանդուի արկածական նկարագրի վերաբերեալ, և ոչ մի։

Ուրեմն ակներև է, որ բնագիրն եղած է լինելով՝—«Կարի չնաղ էր գեղով եւ աննմանեալ (կամ աննման) գնացիւք ոսիցն»։ Ուրեմն Մանդուն՝—շատ չքնաղ էր գեղեցկութեամբ, որպէս և ոտների աննման գեղանի քայլուածքով, և ինչպէս քիչ վեր յիշեցինք՝ «աննման» բառը հնումն շատ գործածական է եղել յանձին արտաքույ կարգի հրաշալի գեղեցկութեամբ օժտուածների։

Միևնոյն հայեացքները՝ տեղի են ունեցել և հնումն, և մասնաւոր «աննման» բառի վերաբերեալ որպիսին Նարեկացին՝ յանձին Աստուածածնի երգում է։—

«Նման-նման աննման, աննմանիդ՝ ով նման, աննմանիդ դունման»։
«Ի գել գայր սայլիկն՝ ի գել ի Մասեաց սարէն ի յաջ կողմանէն»։

Թէ առաջինն և թէ վերջինն՝ ոչ այլ ինչ են, եթէ ոչ գովեստ և նկարագիր հայ օրիորդի (ալլեգորիա)։ Փոխադարձաբար երգած՝ վերջին վարեանտի մէջ՝ ուղղակի նկարագրում է Մասսի լանջերից գել ի գել անուշաբոյր ծաղիկների փնջերով և մեղրահամ բանջարեղէնների կապոցներով՝ վայր իջնող հայ աղջիկը, հայ տիկիւնը, եթէ ոչ՝ Պաղեստինի պատմական պարագաները ինչ կապ ունենին ամպածրար, ալևոր՝ Մասսի և նրա զաւակների հետ, ուր և գեղեցիկ նմանութեամբ սայլիկների լծուած եզների արծաթաձոյլ սամիներին և սամեթիկներին է նմանեցնում տեղային կանացի զարդերը, մանեակներն, ապարանջաններն, ժապաւէններն, և այլ կերպ ևս՝ սնկարելի էր արտայայտուելն։ Անիում՝ որպէս զեղծանաւորի՝ չարաչար քննադատուած Նարեկացին՝ ժամանակի կոյր սխալաստիկ հոգևորականութիւնից՝ իւր քարոզած լուսամիտ, վերանորոգ գաղափարների համար։ Նարեկացու օրինակով՝ սէր է

երգել և Շնորհալին: Ի զարմանս նոյն գեղարուեստական սիրային ոգին նկատուում է և Խորենացու մէջ. նոյնպէս ճնշուած. — «Պատանիք ոմանք իբրև երիտասարդունիւք ճամեցին», բայց և իսկոյն զգալով ինքն իրեն՝ — դատափետում է՝ ի՞նչու գրեցի: Մտքեր նախապատրաստելու համար այսքանն էլ դեռ շատ էր: Մենք կդառնանք և Խորենացուն:

Իսկ ինչ վերաբերում է Արտաշէսի՝ մի սա օրինակ տուիտ, վաւաշ ցանկասիրութեան և որդոց իրենց հօր՝ մի այսպիսի բացասական պահանջի կատարման, որպիսին բնաւ յատուկ չէ եղել հայերի բարոյականութեան մանաւանդ՝ Թագաւորի և Թագաւորական տան, պէտք է բացատրել՝ Թագունի Սաթենիկին վերագրուած բամբասանքների վրիժառութեան լուծումն՝ թէ Արտաշէսի և թէ որդիների կողմից, որոնք կամեցան՝ թէ իրանց արքայական տան՝ և թէ իրենց մօր պատուի վրէժը լուծած լինել առևանգելով Սաթենիկի տարփածու հոմանի Արգամի կանանցից ամենագեղեցիկը՝ ըստ ժամանակի տիրող բարքերի, հրբ ամենամեծ յաղթութիւնը համարուում էր՝ թշնամու կնոջ տիրանալն: Նոյնը և այսօր կարելի է տեսնել արևելեան ազգերում առհասարակ:

Հարկաւ այս ամենը պատում էին աչագեղ Ալանունի Սաթենիկի անուան շուրջը, որոնք և մեծ վիշտ պիտի պատճառէին նրա սրտին և Թախիծ՝ մանաւանդ երգիծաբանական գուսանականները և հէնց այդ ամենի համար էր, որ Սաթենիկը դառն սրտի խորքից՝ անիծել սկսաւ Արտաւազդին... «Եթէ դու յորս հեծցես յազատն ի վեր ի Մասիս, անդ կալցեն զքեզ քաջք, տարցեն յազատն ի վեր ի Մասիս»:

Որպիսի մայրական վշտագին անէծքը Մեծ Պատմահայր Խորենացին թիւրիմացաբար վերագրել է Արտաշէսին:

Այս խնդրի վերաբերեալ յետոյ:

Սիօն վարդապետ:

1914 ամի 20 դեկտեմբերի

Նախիջևան

